ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՐԵՍՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սրտագին շնորհավորություններ Հայրենիքի երջանիկ տարեդարձի առթիվ: Մաղթում ենք՝ նրա համար խաղաղություն, արևշատություն, ժողովրդին՝ մշտական խաղաղություն, առաջադիմություն, Ձերդ Վեհափառության՝ երկար և երջանիկ կյանք նոր նվաճումներով:

Երուսաղեմի հայոց պատրիարքական տեղապահ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Երուսաղեմ,
1 դեկտեմբերի 1951 թ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԵՈՐԳ Զ ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Սովետական Հայկական Հանրապետության հիմնադրության տարեդարձի առթիվ ընդունեցեք ջերմագին խնդակցություններ Ռումինահայ թեմի հայրենակարոտ ժողովրդից:

Խնդրում ենք հաճեցեք մեր բոլորիս հավատարմությունը և սիրո ողջույնը հաղորդել մեր հարազատ Հայրենիքի շինարար կառավարությանը:

Ապրի և հավետ շեն մնա ամենայն հայոց Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը, ապրի և հավետ անսասան մնա սովետական ժողովուրդների փառահեղ Միությունը:

Ռումինահայ թեմի առաջնորդ՝
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ

Բուխարեստ,
1 դեկտեմբերի 1951 թ.

ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՇՆՈՐՀԱՎԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՈՐԳ Զ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Վեհափա՛ռ Տեր,

Մեծ եղավ մեր ուրախությունը, երբ օգոստոս 10-ին, թեմիս առաջնորդ նորապսակ տեր Վազգեն եպիսկոպոս Պալճյան մայրաքաղաքս ժամանեց վերադառնալով Մայր Հայրենիքեն, ուր Ս. Էջմիածնա Մայր Տաճարին մեջ, հուլիս 8-ին արժանացեր էր եպիսկոպոսական օծման շնորհ ընդունելու Ձերդ Վեհափառութենեն:

Թեմական խորհուրդս այդ առթիվ կազմակերպեց պատշաճ ընդունելություն թե՛ օդակայանը թե՛ եկեղեցին, ուր, ի ներկայության բարձրաստիճան ներկայացուցիչներու՝ Ռումեն Ժողովրդական Հանրապետության Դավանության նախարարության, Ռումեն Օրթոդոքս եկեղեցվո, Ռուս Օրթոդոքս եկեղեցվո, Հայկական դեմոկրատ կոմիտեի, ազգային-եկեղեցական մարմիններու, ինչպես նաև հավատացյալներու հոծ բազմության մը, արբազան հայրը մեզի բերավ Ձերդ Ս. Օծության հայրապետական օրհնություններն ու մեր վերածնած Հայրենիքի ջերմագին ողջույնները:

Վեհափա՛ռ Տեր,

Թեմական խորհուրդս իր սեպուհ պարտքը կհամարե ներկայացնելու Ձերդ Ս. Օծության՝ իր և ամբողջ ռումանահայ ժողովուրդի խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը, որ, հարգելով մեր թեմի միջնորդությունը, հաճեցաք մեր առաջնորդ հոր շնորհելու իր նոր աստիճանը: Մենք վստահ ենք, թե տեր Վազգեն եպիսկոպոս Պալճյանը եկեղեցանվեր և հայրենանվեր գործով պիտի արդարացնե, ինչպես ցարդ նաև հետ այսորիկ, Վեհափառության ու մեր ժողովուրդի վստահությունը, և, որպես եպիսկոպոս, ավելի հեղինակավոր կերպով պիտի ներկայացնե Հայաստանյայց Ս. Եկեղեցին, աստվածային շնորհ ու նոր ուժ և լույս առած ըլլալով մեր ազգի կենդանության աղբյուրներեն՝ մեր Մայր Հայրենիք Սովետական Հայաստանեն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն:

Որդիական ամենաջերմ զգացումներով զեղուն հոգվով, կմաղթենք Ձերդ Վեհափառության արևշատություն ու միշտ քաջառողջ կյանք, և փառավոր հաջողություն Ձեր եկեղեցանվեր ու հայրենանվեր մեծ գործին, խնդրելով միաժամանակ, որ բարեհաճիք ընդունիլ մեր բոլորիս խոր հարգանքի ու հարազատ սիրո հավաստին:

Մատչելով ի համբույր Ձերդ Ս. Օծության օրհնաձիր Աջույն՝

ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՓՈԽ-ՆԱԽԱԳԱՀՆԵՐ՝ ՀՐԱՆՏ ՀԱԿՈԲՅԱՆ, ՍԱՐԳԻՍ ՃԵՊԵԼՅԱՆ:

ԱՆԴԱՄՔ՝ ՏԻԳՐԱՆ ՄԻՆԱՍ, ԱՂԵՔՍԱՆԴՐ ՍԻԼՎՅԱՆ, ՀՄԱՅԱԿ ՔԵԼԼԵՐՅԱՆ, ԳԱՐԵԳԻՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ԼԵՎՈՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԱԿՅԱՆ, ԹՈՎՄԱՍ ՇԻՇՄԱՆՅԱՆ:

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼՓԱԳՅԱՆ:

Բուքրեշ, 9 հոկտեմբեր 1951.



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՌ Արմ.ՍՍՌ Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
3250-53